

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
Հ. ՄԱՍՈՒՐԵԱՆ



Fondateur
M. Mamourian
Directeur - Rédacteur en chef
H. MAMOURIAN

ARÉVÉLIAN MAMOUL,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

Table with subscription rates: 500 ԴՐՔ. (Armenia), 250 ԴՐՔ. (Abkhaz), 150 ԴՐՔ. (Georgia).

Բաժանորդագրութիւնը կ'սկսուի
ամեն ամսոյ 1 ին և 15 իր

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

100 ՓԱՐՍ

100 ՓԱՐՍ

ՎԵՐԱՐԾԱՐԾՈՂ ՅՈՅՍԵՐ

Համաշխարհային պատերազմին առաջին տարեկիցէն սկսեալ և թերևս այլ պատերազմ յայտարարուած վայրկեանէն Հայերու բաժինն եղած է անընդհատ յոյսերով ու յուսախաբութիւններով տարուբերելի:

Արտասահմանի Հայութիւնն առաջին վայրկեանէն սկսաւ հայկական դատին յաջողութեան համար ամեն օգտակար համարուած միջոցներուն զիմել և Բարիկէ Ազգ. Պատուիրակութիւնն՝ «առանց զոտոգութիւններու» կարելի չէ ազատութեան արժանանալ» ճշմարտութեան վերահասու, ջանք չխնայեց հրահրելու հայ երիտասարդութիւնն որպէսզի կամուրջ դրուի Ֆրանսական օտար լէզուին և ապա կ'կազմուէին հայ կամաւորական գունդերն որոնք Պաղեստինի ճակատը կ'զրկուէին Ֆրանսական հրամանատարութեան տակ:

Մտազիր չեմ այս իրողութեանց վրայ ծանրանալ, այլ նպատակս է ցոյց տալ թէ՛ պատերազմի առաջին շրջաններէն սկսեալ Հայ ազգը իր հայրենիքին տիրանալու համար շնչկրկեցաւ ամեն սեռակ ձեռնարկներէ և ոչ միայն խօսքով այլ և գրական կերպով ջանաց այդ ազատութիւնն ձեռք բերելու համար ամեն տեսակ զոհողութիւններու յանձնառու ըլլալ:

Թուրքիոյ Հայ ժողովուրդին կրած տառապանքին, ունեցած կորուստին, անօրինակ և աննախընթաց չարչարանքներուն և տուած զոհերուն վրայ կըրկին ծանրանալ չենք ուզեր:

Վերջապէս պատերազմի հինգ երկար տարիներն յոյսի և ակնկալութիւններու երկար շարք մը, երկար օդակ մը կողմեցին, վարկեան մը իսկ չյուսալքուեցաւ արտասահմանի Հայութիւնն, այն անտեղիտալի համոզումն և անխախտ հաւատքն ունենալով՝ որ հայկական դատն շնորհուած է և Հայաստան փրկուած:

Անվերջանալի սպասումներէ յետոյ, ահա հասաւ զինադադարի ուրախութիւն վայրկեանն: Այնքան սպասուած ու չիրականացած բոլորէն վերջապէս իրականութիւն կ'գտնէր և ամեն հայու զէմք կ'ճառագայթէր վստահ ու ապահով քաղուելիք յաղթանակի պտուղին:

Սակայն անցնող տարուան մը շրջանն Հայուն համար՝ տարբեր դրութիւն մը ստեղծեց: Այդ մէկ տարին յոյսի և յուսախաբութեան, ակնկալութիւններու և յուսախաբութիւններու տաժանելի տարի մը դարձաւ:

Մեր ոսկեղէն յոյսերն՝ փոշիացան, մեր արդար իրաւունքներն՝ անտեսուեցան, մեր բոլոր զոհողութիւններն՝ անտրօք պարտականութիւններ համարուեցան, մեր տուած միջոցն մը աւելի զոհերն՝ տարուան մը ժամանակամիջոցին մէջ անշունչ կամ սովորական տեղիքներ կամ ստուերներ դարձան:

Գումարուեցաւ Հաշտութեան Համաժողովն, սկզբունքով ընդունեց փոքր ազգերու ազատագրութեան էական կէտն և նուիրագործեց զայն վերստին դաշնագրով:

Եւ ահա յանձնառութեան կամ հովանաւորութեան հարցն դրուեցաւ սեղանին վրայ, ո՞վ պիտի ստանձնէր այդ բեռը, լաւագոյն համարուեցաւ Ամերիկա և Հայերս մեր թեւերն տարածեցինք, մեր սրտերն շատկէք պարզեցինք, մեր զգացումներն մերկայարանաց բացինք և հեկն սպասեցինք հանդիսաւոր «այո»ին:

Այս հանգիսաւոր «այո»ն զեւ չարտասանուեցաւ, վեց և թերևս աւելի տնօրէններէ ի վեր ուժաթափ եղանք, սպասեցանք, մաշեցանք, նորանոր զոհեր, նորանոր ողջակէզներ նուիրեցինք այդ «այո»ին և Պակայն չարտասանուեցաւ:

Ամբողջ ամիսներ յուսոյ և յուսախաբութեան ամիսներ եղան մեզի համար, տառապանքի ու հարկաւորութիւնի, յուսախաբութեան և վստահութեան:

Ամերիկեան Ծերակոյտն հաշու ունէր տեսնելիք, հաշուեկշիռ ունէր պատրաստելիք և Մր. Լօճ շատ հեռու կ'գտնուէր հայկական գողգոթայէն, շատ հեռու Մասիսի կատարէն, մղոններով հեռու Փոքր-Ասիոյ բարբարոսներէն, ովկիանոսներով անջատուած էր Ամերիկա՝ Հայաստանէն, մինչդեռ Մր. Ուիլսոն իր մօտ եկած էր վերջապէս Բարիկէն և Լօճ՝ իբրև հանրապետական մը՝ պայքար ունէր մղելիք ռամկավար Ուիլսոնի հետ, իրեն ինչ փոյթ եթէ ազդի մը մնացորդ խեղճները, բեկորները խաբու պիտի ոչնչանային ու անհետանային:

Եւ Հայերս այդ երկար ամիսներուն մէջ տարուբերուեցանք և տատանեցանք աղօթելով ու կերտներ վառելով որ շուտով ապաքինի Մ. Նահանգաց մարդասէր նախագահն և ձեռք առնէ հայկական դատին պաշտպանութիւնը:

Հայկական պատուիրակութիւն մը կ'սուրար Ուաշինկթըն, կ'ներկայանար Ծերակոյտի արտաքին յարաբերութեանց յանձնաժողովին, կ'պարզէր Հայոց բաղձանքներն, Արարտի հանրապետութեան ստիպողական կարիքները և ամբողջական Հայաստանի հովանաւորութեան անմիջական պետքը, և յանձնաժողովն կ'ներկայանար իր նպատաւոր տեղեկագիրը Ծերակոյտին:

Եւ ձերակոյտը հասկացողութեան գետին մը չգտնելով կ'գոցէր իր գունդը և միևնոյն ժամանակ Հայոց ցաւաբեկ սրտերը:

Սպառուծի և հատնուծի օրեր ապրեցանք ու կ'շարունակենք ապրիլ:

Սակայն քանի մը օրերէ ի վեր մեր յոյսերն սկսան լվերարծար ընել, ողի և շունչ սկսանք առնել, որովհետև Ծերակոյտն՝ կ'երևի՛ վերջապէս հասկացողութեան գետին մը գտնելու խնամարամտութիւնն կ'որոգիւրէ և Մր. Ուիլսոն յանձնառու կ'ըլլայ կրկին Ծերակոյտի սեղանին վրայ գնելու վերստին գաշնագրութիւնը, Ամերիկեան ժողովուրդին ուղղիլ առաջագրելով պատգամայի:

մը՝ բացատրելու համար անոր մէջ հանրապետական կուսակցութեան ընդգրկուած դերն՝ ռամկավարներու ղէմ և ոչ թէ ուղղակի շաշնագրին:

Հաւանական է որ այդ պատմագրին հարկ չ'մնայ, քանի որ Ծերակոյտն վերջապէս կ'զգաստանայ և իբրև խաղալիք մը չնկատեր դաշնագրի մը որ Բրիտանական կայսրութեան նման հեռուտես կառավարութիւն մը առանց այլևայլի և երկար պրպտուիներու կ'վաւերէր և կ'զնէր զործարգութեան:

Ահա այս լուրերն են որ մեր սրտերուն մէջ կ'վերարծարեն յոյսի ջըրվէժներ և վերջապէս կ'մղեն մեզի կրկին կործելու թէ՛ պիտի վերսկսինք ապրիլ և Ամերիկեան հովանաւորութիւնն չպիտի յամենայ տարածելու իր արծուի թեւերն Հայ տառապող ազգին վրայ, բա՛ւ համարելով անոր ճգնաժամային յուսալքման և յուսախաբութեան տաժանքի ժամերն ու կրած երկունքները:

Հ. Մ.

ԶԱՅՆՆԵՐԻՆ ՄԱՐ

Պօլսոյ խախտուած Նաում էֆ. որ Բարիկ ուղևորած էր ամիսներ առաջ, պաշտպանելու համար թրքական դատը, ինչպէս կ'երևի, ցոյց տուաւ իր հայրենասիրութիւնն և կարգ մը յայտարարութիւններ ըրաւ Ֆրանսական թերթերու, ի նպատակ թրքական դատին:

Ոմանք կ'մեղադրեն խախտուածութիւն ընթացքը, նոյնիսկ կ'գտնուին հրեայ հասարակութեան մէջ անհատներ, և անոնց թիւը ստիճանագրակ չէ որոնք կ'այսպէսն Նաում էֆ. ի բուն թողարկուած թրքականութիւնը:

Ո՛չ, իրաւունք չունին անոնք իրենց տեսակէտներուն մէջ, որովհետև չեն կրնար չճշտում բանեցնել որևէ անհատի մը կարծիքներուն և սկզբունքներուն:

Եթէ պնդեն թէ՛ Նաում էֆ. սխալած է, ծուռ քայլ մըն է սուածը, նոյնքան Նաում էֆ. ևս իրաւունք կունենայ բեկու թէ իրենք կ'սխալին և իրն է իրաւունքը, հետևաբար այդ երկու զիրար հակասող կարծիքներուն միջև միացման գիծ մը գտնելու համար, լաւագոյն էր որ ամեն ոք իր սկզբունքներուն ու տեսակէտներուն վրայ մնայ և սպասէ զէպքերուն:

Սակայն այսպէս չեն խորհր թուրքերը և անոնք իրենց արդար իրաւունքներն:

Լուսինն մէջն են, երկնքին մէջ աւնոնց պինտածը, երկրի վրայ՝ զրոտնուեցաւ, աշխարհիս զորս կողմ պաշտպաններ ու ջատագովներ, փնտաեցին, մտնորու լոյսը բաւարար չեղաւ և ջահեր վառեցին, հիւքտրական լայտերներ փնտաեցին և յուսակտուր գլուխին կախած մտածկոտ մնացած պահերուն յանկարծ ահա շրջմովի լոյսի մը տպաւորութիւնն ունեցան, սուինքնուեցան, զգիւնեցան և ի պատիւ Նաում էֆ. ի Պօլսոյ մէջ կ'պատրաստեն փառաւոր ընդունելութիւն մը:

Այդ իրենց պարտականութիւնն է, ինչպէս որ խախտուածութիւն իրաւունք է ի փոխարինութիւն պատիւ և ջերմագին ընդունելութիւն մը ակնկալել իր թուրք հայրենակիցներէն:

Ո՞վ կրնայ բռնանալ Նաում էֆ. ի կարծիքներուն վրայ, ո՞վ կրնայ մեղադրանքի ճիշ մը արձակել, Նաում էֆ. իբրև ճշմարիտ օմանցի մը, իբրև ճշմարիտ հայրենասէր մը իր ծրուած երկրին ճիտ պարտքը կը կատարէ և անշուշտ համակարծիք ալ չէ Պօղեստինի մէջ համաձայնութեան կողմելիք որևէ հրէական առանձնաշնորհման մը և հաւանականաբար պիտի բողոքէ, եթէ այդպիսի ձեռնարկի մը ստատրներ կանգնին:

Մարզը գոհ է թուրքերէն և անունցմէ բաժնուիլ չի փափաքիր, ո՞վ կրնայ ձայն բարձրացնել...

ԵՍ

ՊՈԼՍԱԿԱՆ ԵՒ ՆԱՄԱԿԱՆԻ

(Մեր մասնաւոր քրթակցեմ)

4. Պօլսոյ, 22 Հոկտեմբեր 1919

Ազգ. ժողովը այս շարժու գործեալ տպարգիւն նիտած մը գումարեց...

Չափազանց զժբախա բան է մտածել թէ այս տաղանակի օրերուն մէջ տակաւին մարդիկ կան որ ազգին համար կը զլանան նոյնիսկ քանի մը ժամ զոհել և այսպէս անգործութեան կը մատնեն Ազգ. ժողովը, որուն գոյութեան արդէն հաշտ աչքով չէ որ կը նային կարգ մը ատարեր, որոնք քանդելու գործին մասնագետներն են և ո՛չ թէ շինելու:

Գործախտութիւնը այն է որ Ազգային ժողովի արդի կազմին մէջ մտածեմ են հազուապէս որ քաղաքութիւններով, այնպիսի երեսփոխաններ ուրոնք պատուակալ կերպով մը ստանձնած են իրենց պաշտօնը և երբեք

անոր բորձրութիւնը պահելու կամք չունին:

Այսօր պաշտօնի վրայ գտնուած 80ի չափ երեսփոխաններէն, 20էն աւելի կը գտնուին արտասահման, որով հարկ կ'ըլլայ որ 60 երեսփոխաններու 50ը նիտար ներկայ գտնուին, ինչ որ և ոչ մէկ ատեն կարելի եղած է:

Մասնաւոր պէտք է նկատի առնել թէ անոնք ալ կը պատկանին մեծ մասամբ պատկարգի մը որ աւելի շնորհ մը կը նկատէ ժողովի գալլը:

Այս անտարբերութեան մէջ դեր մը կը կատարէ նաև այն վհատ վիճակը որ հիմա պոյութիւն ունի մեր մէջ, զլսուոր փնտաղագորէն ի վեր անցնող տարուան մը շրջանին մեր յոյսերը պատկուած չըլլալէն:

Առաջին խանդավառութեամբ շա-

տեղ հարկնախան և սահմանափակ մը ազգային գործերու փարեցան, և ամեն նշին աւելի ազգային շրջանակներու հետև մնացող անհատներ պահ մը տեսանք, որբախնամ և տարագրելոց գործին գլուխը:

Ամենուն համոզումը սա էր թէ ինչ որ ալ ըլլար տրուած աշխատութիւնը, թափուած ջանքերը և ըլլալիք զտղտը թիւնները քանի մը ամիսներու գործ էր, և ստոր համար դասալիք ըլլալ չէր արժեք: սակայն գործերը ցոյց տուին թէ տարին բոլորուելէ յետոյ դեռ այսօր ճշգրի կարելի չէ հրա պիտի վերջանայ արեւելքի խնդիրը և ինչպէս պիտի ճշտուի մեր դիրքը:

Հետեւաբար յուսահատութիւն տրուեց և վնասութիւնը ընդհանուր եղաւ, և դարձեալ սկսաւ ամբիօք շաշնկութեան նոր շրջան մը:

Երբ օրինակի համար Դուբնան Ա. Ի նման եկեղեցական բարձրագոյն հեղինակութիւն մը աւելորդ կը համարի իր երեսփոխանական պարտականութիւնը կատարել և իբր պարտազանց կը գտնուի երեսփոխանութիւնէն, այլևս աւելորդ է կարծեմ սպասել ու է Եսկեղեցի ազգայն մը կամ մանրֆաթուրաճի էֆէնտիէ մը որ աւելի մեծ պարտաճանաչութեամբ մը ներկայ գտնուի Ազգ. Ժողովին նիստերուն, այս գրամապաշտ դարուն մէջ առնուազն քանի մը սակի կորուստը աչքը առնելով:

Ազգ. Ժողովին անդամները արգէն տասը տարի է որ պաշտօն կը վարեն և ձանձրացած են իրենց պաշտօնէն: Անհրաժեշտ է որ նոր տարրեր, երկտասարդ ոյժեր և կենսական տարրեր, աւելի պարտաճանաչ, աւելի գոհողութեան տրամադիր, ու աւելի գիտակից գան գրաւել թափուր մնացած աթոռները և տան ժողովին հեղինակութիւն, ինչպէս նաև կենսունակութիւն:

Այսօր, զգալիորէն ինչը հոն է որ զեռ նոր անդադարման այս ժողովը վերակազմելու պէտքին վրայ երբ այս քայլաշարմէն ուղղակի իրենք կը վերնասուին, և ազգային գործերու մեքեանակաճութիւնը կը դադրի:

Ազգ. Ժողովին քայլաշարման չափ օրուան խնդիր է նաև ազգ. վարչութեան կազմին տատանող վիճակը:

Ս. Պատրիարքը հազիւ 8-9 հոգի գտաւ յօժար ազգային վարչութեան ծանր բեռն ստանձնող, սակայն անոնք ալ յուսահատ երերուն դրութեան խիստ տրամադիր են իրենց աթոռները ձգելու:

Միհրան Մուրադեան, վահան Եանրիման և վահան Ալեքսանդրեան առաջին հրաժարողները հղան: Երկու նոր առնուած անդամներն Յովսէփ Տէյրիմէնտեան հազիւ թէ պաշտօնի ձեռնարկած և ոգեւորութեամբ իր գործին փորձած, կը լսեմք թէ հրաժարած է, չենք գիտեր ինչո՞ւ: և կը լսուի թէ Պատրոս Խորասանեան եւս հրաժարած է կամ պիտի հրաժարի, իր եղբորը մահուան առթիւ Բերայի հայրենիքի սուրբի յանձնաժողովին ցոյց տուած մէկ անհարկի ընթացքէն վերաւորուած:

Իսկ Ազգ. վարչութեան ամենէն գործունէայ և աշխատող անդամներէն մին, որ ստանձնած էր խնամատարութեան գործերու հսկողութիւնը և կը նպատակաւորէր եղծական յանձնաժողովին աշխատութիւնները զբախտ արկածի մը հետեւանօք պարտաւորուած է մի քանի ամիսներ տունը մնալ, որով իր շատ կարեւոր դերն ալ լրացնող չպիտի գտնուի վարչութեան մէջ:

Այս պայմաններու մէջ դիւրին է երեւակայնի թէ որչափ կը դժուարանայ վարչութեան գործը, և որքան անհրաժեշտ կը գտնուի անոր վերակազմութիւնը, մասնակցութեամբ կարող և ձեռնհաս անձերու, որոնց սովորաբար ազգաբար զրալի է:

Այս ուրբաթ առաւօտ, Ազգ. Ժո-

ղովէն առաջ խառն ժողովը նիստ գումարեց զբաղելու համար Երուսաղէմի խնդիրը:

Այս անիծեալ խնդիրը որ ընդհարակրակալի քանդումներու և վրագրգռութեան տակ թաղուած կը կարծուէր, դարձեալ երեւան կուգայ և մեզի ծաղր ու ծանակ ընել կ'սպասանայ օտար ազգի բաժնի:

Երկու բառով բացատրենք թէ այս խնդիրը ինչպէս երեւան եկաւ:

Անգլ. կառավարութիւնը փափաք յայտնած էր Երուսաղէմի պատրիարքին ընտրութիւնը կատարել և վանքը պատասխանատու գլուխով մը օժտել, և այս փափաքը յայտնած էր Պոզոս Նուպարի:

Պոզոս Նուպար իր կողմէն անգլ. կառավարութեան այն փափաքը հաղորդած էր Կ. Պոլսոյ պատրիարքարանին:

Պատրիարքարանը նկատելով Կիլիկիոյ Սահակ կաթողիկոսի Երուսաղէմի պատրիարքութեան ձեռնաձեռն ըլլալէ յետոյ անգլ. կառավարութիւնը վանքին մէջ հաստատած էր վարչութիւն մը որ օրէնքով նախատեսուած չէր, նաև որոշեց տեղապահ ընտրութիւն կատարել և այս մտքով հրահանգ տուաւ:

Հիմա այդ ընտրութեան հրահանգին եկած է պատասխան մը որուն մէջ արդի վարչութիւնը անկարելի կը նկատէ այսպիսի ընտրութիւն մը և անոր անպատեհութիւնները կը թուէ:

Խառն ժողովը երկար խորհրդակցութիւններէ յետոյ որոշեց Պոզոս Նուպարի միջոցաւ բանակցել անգլիական կառավարութեան հետ, և բացատրել կացութեան բոլոր հանգամանքները և վանքին պետ մը ընտրելու համար տիրող դժուարութիւնները և զանոնք բաւանալու միջոցները ցոյց տալ:

Անգլ. կառավարութեան որոշումէն կախում ունի ուրեմն այս խնդրոյն ապագայ լուծումը:

Վարչական շրջանակներու մէջ այս խնդրոյ մասին տիրող մտայնութեան իրազեկ ըլլալու համար իմ ըրած հարցումներու ստացած պատասխաններէն սա եղբակցութեան եկայ թէ ընդհանուր համամտութիւն մը գոյութիւն չունի Ոմանք կը մտածեն թէ հարկ անհրաժեշտ է որ կեդրոնը ունէ եղանակով մը Երուսաղէմի պատրիարքական ընտրութիւնը կատարէ ըստ ընդհանուր անկարելիութիւն կը տեսնեն այդ ընտրութիւնը կատարելու սա տրամաբանութեամբ որ Բ. Դուբնան ինքն իսկ յայտարարած ըլլալով Սուրիոյ և Պաղեստինի Թուրքիայէ բաժնուած ըլլալը, այլևս չպիտի ուզիր վտարացնել Երուսաղէմի համար ընտրուած Պատրիարք մը Յետոյ խնդրական է Կ. Պոլսոյ Ազգ. Ժողովը որ ստանձնան հեղինակութիւն ունի այդ ընտրութիւնը կատարելու:

Ազգային գործերու համար անձնաւորութիւն մը որուն գիմեցիք իրկարծիքը հասկնալու համար, արտայայտուեցաւ սա կերպով:

Տիրուածութիւն պատրիարքական ընտրութեան խնդիրը արդի պայմաններուն մէջ կարծուածին չափ պարզ խնդիր մը չէ: Անիկա իր մէջ կը պարունակէ մեկէ աւելի սկզբունքի էական խնդիրներ, որոնք պէտք չէ աչքէ հեռացնել: Մասնաւորապէս երկու սկզբունքներ պէտք է անպայման փրկուին Առաջինը ազգային ընդհանուր հեղինակութիւնը Ս. Յակոբեան վանուց և անոր մատակարարութեան վրայ: Երուսաղէմի Ս. Տեղեաց մէջ հայոց իրաւունքները, ինչպէս Ս. Յակոբեան վանքը և անոր հարստութիւնները, միաբանութեան սեփականութիւն չեն այլ ազգին, ուստի պէտք է անոր հսկողութեան տակ մնան Սահմանադրութիւնը՝ ամենահին ժամանակներէ ի վեր ընդունուած այս սկզբունքը փրկած էր պատրիարքական ընտրութիւնը և ամարտառութեան իրաւունքը Թուրքիոյ սահմաններուն մէջ ապրող հայոց վարչական կեդրոնին սեփականութիւնը: Երկրորդ սկզբունքը

քը սա է որ պատրիարքը պէտք է զօրացած ըլլայ քաղաքական հեղինակութեան վաւերացմամբ, այսինքն տիրող պետութիւնը պէտք է ձանձնայ անոր հանգամանքը Սահմանադրութեան տրամադրութեամբ ընտրութիւնը ճշգրտապէս կը տեղադրուէր Բ. Դուբնան և Ֆէրման կը նուիրագործուէր անոր իշխանութիւնը: Հիմա ո՞վ պիտի տայ այդ նուիրագործութիւնը և հեղինակութիւնը:

Այս երկու էական սկզբունքները փրկել և իրարու հաշտեցնելու համար մեծ դժուարութիւններ կան: Ազգ. Ժողովը Թուրքիոյ սահմաններէ դուրս գտնուող բոլոր ազգին պատկանող աթոռի մը համար կրնայ իր մասնակցութիւնը բերել ինչպէս Ամենայն Հայոց հայրապետութեան համար, բայց զայնուհանձակ չի կրնար կատարել Յետոյ անգլ. կառավարութիւնը կամ պաղեստինի քաղաքական իշխանութիւնները պիտի ձանձնա՞ն Կ. Պոլսոյ հեղինակութիւնը: Ասոնք բաւական կնճռոտ խնդիրներ են: Լաւագոյն պիտի ըլլար սպասել հաշտութեան կրնքման, կացութեան համեմատ կարգադրութիւն մը ընելու և քաղաքական կազմակերպութեանց համաձայն կազմակերպելու Ամենայն Հայոց և Կիլիկիոյ կաթողիկոսութիւնները, Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքութիւնները, որոնց քաղաքական դերը դեռ չէ աւարտած ինչպէս կը կարծեն մեր երազատեաներէն ունեւոր:

Ես կը կարծեմ, թէ հաւանօրէն սա վիճակը պիտի առնէ ապագայի մեր հոգևոր կազմակերպութիւնը:

Էջմիածնայ կաթողիկոսութիւնը պիտի ըլլայ անկախ ու միացեալ Հայաստանի հոգևոր վերին հեղինակութիւնը, պահելով միևնոյն ատեն Ամենայն Հայոց կաթողիկոսութեան տիրադուր և հեղինակութիւնը՝ բոլոր աշխարհի հայոց վրայ:

Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը պիտի գտնուի հոգևոր վերին իշխանութիւնը Քրանսական հովանաւորութեան ենթակիւնը հոգաբարձիներու մէջ ապրող Հայոց:

Կ. Պոլսոյ ինչպէս անցեալին նոյն պէս ապագային պիտի գտնուի վարչական-եկեղեցական կեդրոնը Թուրքիոյ Հայոց, և վերջապէս Երուսաղէմ նոյն հանգամանքը կը ստանայ Անգլիոյ իշխանութեան կամ հոգաւորութեան ենթակիւնը երկիրներու համար:

Էջմիածնի կաթողիկոսը ըստ առաջնոյն պիտի ընտրուի Անկախ Հայաստանի սահմաններու մէջ ապրող հայերու, ինչպէս նաև աշխարհի մէն կողմը ապրող հայոց քուէով: Կիլիկիոյ կաթողիկոսը, Կ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքները, պէտք է ընտրուին իրենց թեմականներուն քուէով և պէտք է պաշտօնի անցնին Ամեն. Հայոց կաթողիկոսին և Քրանսական, Թուրք և անգլիական կառավարութեանց վաւերացմամբ: Այս երեք վերջիններէ Կ. Պոլսոյ ունի իր Սահմանադրութիւնը և Կիլիկիոյ և Երուսաղէմ սոյն արկարին վրայ պէտք է ունենան մէկ մէկ նոր կանոնադր:

Իսկ Իզմիր և Հիւլէս պետութեան ենթակիւնը վիճակները պէտք է կազմեն միակ վիճակ մը, Զմիւռնիոյ Արքեպիսկոպոսին իշխանութեան տակ, որ պէտք է վարուի Սահմանադր. տրամադրութիւններով, միայն թէ այլևս պէտք է կապուի Էջմիածնայ, ինչպէս են Ամերիկայի, Եւրոպայի, պարսկական Ատրպատականի, պարսկահնդկաստանի առաջնորդարաններ և ինչպէս պէտք է ըլլան ասկէ յետոյ Պուլկարիոյ, Ռուսիոյ, Նախիճեանի (հիմա պէտք է կուսի Ուրբիոյ), Ատրախանի (հիմա պէտք է կուսի Ռուսիոյ) Թիֆլիսի (ուսելի հին ու տըրամարանական իշխամբ վրաստանի և Իմէրէթի) և Եւրասիոյի (հիմա պէտք է կուսի անկախ Ատրպատականի) առաջնորդութիւնները:

Աւելորդ է ըսել թէ այս խորհրդաձութիւններուն մէջ մէկէ աւելի մտածելիք կէտեր կային որոնց վրայ ձեռք

նահատութիւն չունիմ ես կարծիք յայտնելու, սակայն իբր... լրագրող գիրք առնել աւելորդ չհամարեցի, ձեռնահատներուն ուշադրութեան ներկայացնելու համար:

ԱՐԳԱՍ ԱՆԳՆՂԱՅԻ

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ի Է Ս

ՈՂԵՐԳԱԿԱՆ ՎԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Ողբերգական կատակերգութիւն, մրմնջից մատերիմ եղբական ժպիտով մը, ու ինձ երկարեց օրաթիւթը:

Սովորական անտարբերութեամբս առի զոյն իր ձեռքէն և աչքէ անցուցի իր մատնանշած Հատուածը:

«Ազգային կեանք, Չանգեզուրի մէջ Հայ բանակին տարած յաղթութեան համար, Ազգային իշխանութիւնը, Իզմիրի Հայ հասարակութեան կողմէ շնորհատրական հեռագիրներ ուղղած է...»

Բաւական երկար ժամանակ սպասեց այս քանի մը տողերուն ընթերցումը, որովհետև հորիկ եղաւ կարգալու վերստին կարգալ զանոնք, այսքան լուրջ գրուածքի մը մէջ գրուելու համար կատակերգութիւն մը: Ու մտերիմա կարծեա ուզելով ինձի խնայել աւելորդ ճիգեր և փրկել զիս ապշեցումի առաջնորդող վիճակէ մը, շարունակեց:

— Ասկէ աւելի շնակա հեղեանք, Մեր տառուկ անկողիններուն մեր գողցիկ վայելքներուն մէջ չենք մտնար շնորհաւորել մեր հերոսները, որոնք «ոտարապիկ ու քաղցած» կը կուսին, կը մեռնին, կը յաղթեն: Ու չենք ամէնար այսպէս լուրջ շնորհաւորականներով» մեր պարտականութեանց սըրբազնագոյնը կատարած ըլլալու մեր հաւատքը և գոհունակութիւնը յայտնելու, «ի ձան փողոյ և թմբակի» Ասկից առաջ Սրբազան պայքարին այդ հաւառը վայրէն աղեկաբար նամակներ գրած էին «անհատներու և Աղագային իշխանութեանց, Դրամ կ'ուղէին, դիւ կ'ուղէին, գուրպակ կ'ուղէին մեր քաջներուն համար, որոնք «ոտարապիկ ու քաղցած» կը կուսէին ձիւնին ու բուքին մէջ մեր ճակատագրին բախտաւորումը համար: Ու բոլոր աղեկաբար կոչելը կը մնային անպատասխան, նոյնիսկ շտաբի շափ գաղտնի կը պահուէին: Եւ ինչ գտնի հեղեանք երբ այսօր մեզմէ սպասուած այնքան կենսական իրթերու փոխարէն, օրինակելի փութկոսութեամբ մը կ'ընտանք զրկել աժանագին, նոյնիսկ ձրի «շնորհաւորութիւն»ներու թորէ սիրելիս, թէ այդ շնորհաւորականները պիտի կարեան ծածկել մեր կուսիւնը Հայ գիւնեւոր և շնորհի անոր անհրաժեշտ այն ուժը և կորուստը, որով նա կարող ըլլայ շարունակելու նուիրական պայքարը: Հայ գիւնուորը անհունապէս աւելի գոհ և աւելի շնորհապարտ չպիտի ըլլար իբր իր նահատակ եղբայրներուն համար իրեն ուղղուած շնորհաւորական այսքան շքեղ ու չոր բառերու փոխարէն, իրեն զրկուէին այն զոյգ մը գուրպան և կտոր մը դեղը, որոնցմով միայն պիտի կարողանայ իր կողմէն ինկող իր եղբայրներուն սրբազան վրէժը լուծել:

Սառն ու քիչ մ'ալ սպաննիլ սկիւապիկութեամբս, ուղեցի քիչ մը հանդարտեցնել մտերիմա զինքը աւելի մօտեցնելով իրականութեան և ջանալով հաշտեցնել անոր հետ:

— Կը գործանամ որ բաւական յուզուած ես և սրտեղած. երեւայ թէ նոր չէ՞, սիրելիս, և անոր կ'սկսուէր: Նը շատ բնական օրէնքներու մէկ բանական արդիւնքն է: Եւ Խնքը կը փութանք շնորհաւորել այդ աննման քաղաքները, որովհետև անոնք իրենց կեանքով կեանք կուսուան մեզի, իրենց տառապանքով երջանկութիւն և հանգիստ կ'պարգևեն մեզի: Մտրգային հոգեւոր հիմնական յատկութիւն — Կասարութիւն — մէկ պարզ արտայայտութիւնն է այս: Եւ սակայն

ինչ որ կարելի է դիտել տալ այս գըր- ուածքին մէջ, որ շատ լուրջ է և չի կրեր կատակերգական ունէ յատկանիշ այն է որ իրեն կը պակաս կատարե- լութիւն Լրացնելու համար զայն պէտք էր աւելցնել նաև հետեւեալ տողերը. Ո՛վ անմահ քաջերը մեր հայրենիքին, գիտցած ըլլաք որ թէև մոռցանք ձեզի զրկել փամփուշտ, դեղ, դրամ և գուլպայ, բայց ձեր ա- նունները, յաւէտ անմոռաց պիտի մնայ մեր սրտերուն մէջ: Մենք միշտ պիտի խոնարհինք ձեր յիշատակնե- րուն առջև, ձեր տարիքներուն առ- թիւ շքեղ սգահանդէսներ պիտի սար- քենք և պիտի հրաւիրենք մեր պուէտներն ու հետադարձը, որ զան ոսկի տասերով գրել ձեր փառքը և աղամանդէ բառերով «սգալու ձեր յի- շատակը և սրտատուելու» «օրհնել և փառաբանել ձեր աստուածային նուր- արհերումը» որովհետև դուք մեռաք մեզ պարհանելու համար, գծադրա- ցաք մեզ երջանկացնելու համար, տառապեցաք մեզ շնորհելու համար սուրբ ազատութիւնը» Ահա սիրելիս, եթէ ազգային իշխանութիւնները այս տողերն ալ աւելցնելու խոհեմութիւնը ունենան, այն ատեն մենք, Ձմիւռ- նահայերս, լիւրջ կատարած պիտի ըլլայինք մեր պարտականութիւնը:

—Ողբերգական կատակերգութիւն, կը կրկնէր մտերմա եղբորէն, Ող- րբերգական կատակերգութիւն, դառն ու սպաննիչ հեզմանք մեծ նուիրա- բերումին մեծ Տառապանքին, Սուրբ Պայքարին ուղղուած, եպիտոլի հան- ղիստեաներու կողմէ...

Իր անզուսպ կատաղութեան մէջ կը խեղդուէին, կը կորուէին իր կրտ- րատեալ բառերը և հազիւ հասկնալ կը- լային և իր սեղմուած ակտաներուն մէջէն դժնդակօրէն դուրս ելլող իր խօսքերը:

—Գոնէ գուլպաները զրկէին կը կրկնէր քանիցս, մանկական աղապա- տանքով մը և վշտով ու զայրոթով յորդած սրտի հեղեղումներով:

—Դառն հեզմանք, Ողբերգական կատակերգութիւն, զգացումէ և խղճմտանքէ զուրկ դերասաններու կողմէ, բայց մինչև երբ... կը խոր- հէի իմ կողմէս»:

S. ԹՈՐԳՈՄ

ՔԱՐՆՈՒԹՈ Ք. ԵԱԳՈՒԷԼ

ԵԱՆՏԷՎԻ ԽԱՆ 7

(Փէշախմաճըլար պաշը)

Անոնք որ կ'փոփաքին Չամիչի զուտ օդի գործածել, անտրատ մաքուր և խնամով պատրաստուած, թող գի- մեն վերելի հասցէին, թէ միծաքանակ և թէ փոքրաքանակ գնումներու հա- մար,

Գին Մէն Մի Օնաի 50 ՂՐԾ.

Անհաւատալի դին մը, որովհետև այս ըմպելիին քարտածութեան համար պատրաստուած է, բայց արտածել կա- րելի չըլլալով տեղւոյս վրայ վաճառել որոշուած է այս աժան գնով:

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

2 նոյեմբեր 1919

ՄՈՒՍԹԱՖԱ ՔԷՄԱԼԻ ԴԷՄ

Աթէնքէ կ'հեռագրեն թէ՛ Մուսթաֆա Քէմալի դէմ գնելու համար երկու զօրարած իններ կ'կազմակերպուին: Միևնոյն տղրիւէն կ'տեղեկացնեն թէ՛ այս պատճառաւ կացութիւնը աւելի վատթար հանգամանք մը կ'ստանայ:

ՄԱՀԱՓՈՐՁԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԻՔ

Մ. Վէնիզէլուսի մասին առնուած տեղեկութեանց համեմատ, մահափորձի հեղինակները Վէնիզէլուսի Եւրոպային դէպի Քիւրէա գառնալուն, պիտի կա- տարէին ոճիրը և ապա Աղեքսանդր թագաւորը գահազուրկ ընելով, Աթէնքի մէջ ահաբեկիչ կառավարութիւն մը հաստատուելու մտադիր էին: Ժողովրդային կռուակցութեան պատկանող Յսպանիէի գաւտ բանտարկուած են 17 հանգստեան կոչուած սպաներ:

ԻՄ ԱՂԶԿԱՆՍ

Ալեկոն մտքիս փոփոխիլը քեզի համար ես սանձեցի, տուայտող հոգ- ւուս հեքն ու խոտփը քեզի համար լոյս ու անվերջ ժպիտով մը բողբոջե- ցի և սրտիս մէջ սիրտ ծաղիկը ծաղ- կեցուցի, ամբողջ գիշերներ սնորհի գաւտ աչքերս յոյսով լեցան: Գեղի ու- կեթիլ երազներ հիւսեցի քեզի որդեակ կախարդական արևոտ արշա- լոյս մը պարզելու համար:

Տածանիլի արահետներէ կանանչ զվրուխտ-թարմ ծաղիկներ ժողովցի ես ու տատակոտ ուղիներէն շահող բամբեր, շուշան և վարդ քաղցրի ես, քաղցրաբոյր մթնոլորտ մը ստեղծելու համար քեզ իմ քաղցրիկ զաւակս:

Ինչ որ ըրի ես քու արշալոյսով, մի զլանար գու իմ վերջալոյսիս, երբ մարի արևս ու հողէ վերմակս ըլլայ այնքան թանձր, այնքան անթափանց որ չկարենամ քեզ տեսնել ու լսել թուշիկին զայլայլը, մի մոռնար զիս, եկուր, բե՛ր ինձ ակնարկն քու աչ- քերուն, իմ սիրական երկու աստ- ղերուս բեր ինձ ծաղիկներու: մէջ զարթնող զեփուռին նման քաղձը համբողջ, եկու՛ր միղմել գերեզ- մանիս ստուերներուն տխուր մե- նութիւնը, բե՛ր ինձ բոյրէ՛ք, եկուր սփռել շիրմիս վրայ ծաղիկներէդ ու ցօղել զանոնք քու մարգարիտ արցունքով, ո՛վ իմ հոգեակայն տանի թեթև կ'ըլլայ ինձ հողը ու հեշտին յաւետենական քունը:

ՄԵՐՍԷՏԵՍ Յ. ԷԼՄԱՍԵԱՆ

Տեղական Լուրեր

ԳՐԱԽՄԱՆ բանակի հրամանատա- րութիւնը հեռագիր մը զրկած է հելլէն կառավարութեան փոխ նախա- դահին, բանակի ընդհանուր սպրա- պետին և պատերազմական նախարա- րին: Իր վշտակցութիւնը և ուրախու- թիւնը յայտնելով Պ. Վէնիզէլուսի ան- ձին դէմ գահադրուած մտահոգործին և անոր ձախողութեան համար:

ՀԱՆՐԱՅԻՆ ստողապահութեան անօրէնութիւնն հետեւեալը կը ծանու- ցանէ:

Վերջին 24 ժամուան ընթացքին Իզմիր մէջ պատահած են ծաղիկը 7 դէպք որոնցմէ երկուքը մահացու ե- ղած են և թիֆուսի 1 դէպք:

ԱՌՋԻ ՕՐ Պատահանէի հրապա- րակին մէջ օթոմօպիլի մը զօրաւոր բաղնու մը ունեցած է կառքի մը հետ, որուն կոտակայնը վիրաւորուած և ձիերէն մին ճայթելով մեռած է:

ԴԵՌԱՏԻ աղջիկ մը 15 տարեկան, Դորտելիօի մէջ թոյն առնելով մեռած է իր հետ տանելով իր այս յուսահա- տական արարքին գաղտնիքը: Տակաւին ոչ ոք գիտէ այդ անձնապատկանութեան շարժառիթը: Չենք գիտեր նոյնպէս թէ՛ սէրը մատ ունի՞ այս զօրձին մէջ:

ԻԶՄԻՐԻ ԿԱՐՕՏԵԼՈՑ

Իզմիր կարօտեցոց բաժնուէրու համար Պոլսոյ մէջ կազմակերպուելիք վի- ճակահանութեան մէջ գտնուող գոյքերուն արժէքը 6 հազար սպի կ'հաշուուի:

ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Անգլիացիները՝ օտարականներու հետ զանազան ազդուութիւններու տար- րերը օսմ. դատարաններու մէջ նաշուելու դիւրութիւն մը տալու համար, առժամակէս զանազան անձնատրուութիւններ օսմ. կառավարութեան մէջ պաշ- տօնավարել առաջարկած են. յիշեալ օտարից պետական խորհրդոյ ուղարկու- թեան զրուելով, արդարութեան տեսուչը յիշեալ առաջարկը մերժած է:

ԹԱԼԷԱԹ ԶՈՒԻՑԵՐԻՈՑ ՄԷՋ

Զուեցերիաէ կ'տեղեկացնեն թէ՛ Թալէաթ Քկեղձ անունով մը հոն կը գտնուի:

ԱՆՊԱՇՏՕՆ ՀՐԱԽԷՐ

Թուրք պատուիրակներուն Յունվար ամսուն 13ին Բարիդ երթալու համար անպաշտօն կերպով Բ.Դրան տեղեկացուած է:

ՊՏՏԵՐԱՋՄ. ՍՊՏՅԻՑ ԸՆԹԱՑՔԸ

Հելլէն բանակներու սպաները նախարարաց խորհրդոյ նախագահ Մ. Բէ- բուլիսի հեռագրաւ կ'իմացնեն թէ՛ սոյն մահափորձին հեղինակները պատժելու և զանոնք ջախջախելու իրենց պատրաստակամութիւնն յայտնած են:

ՎԵՑ ՀԱԲԱԹԷՆ

Մ. Վէնիզէլուս Աթէնք պիտի մնայ միայն վեց շաբաթ և այս միջոցին մէջ հաշտութեան գաշնագիրը Հելլէն Խորհրդարանէն վաւերացնել առաջ յետոյ պիտի վերագտնուի Բարիդ և պիտի մտահոգի թուրք հաշտութեան խնդրով:

Մ. ՔԼԷՄԱՆՍՕ յԱՄԵՐԻԿԱ

Եթէ հաշտութեան գաշնագիրը չվաւերացնէ Ամերիկեան ձերականը, Մ. Քլէմանսօ Ամերիկա պիտի ուղևորի, ուր գաշնագիրի մասին պիտի բանախօսէ:

ԵՐԿՐԱՇԱՐԺ

Հասած տեղեկութեանց համեմատ մինչև այսօր Սօմախ մէջ կ'չարունակ- ուին երկրաշարժի ցնցումները:

ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՀՐԱԺԱՐՈՒՄ

Քլէմանսօի դահլիճին այն անգամներն, որոնք վերջին շնորհութեանց մէջ չեն ընտրուած հրաժարական տուած են:

ՀՈԳԵՆՆԻԻ ԸՆԿՂՄՈՒՄ

Հէլլէն «Բանիքս» շոգնաւը Պոլսէն Բիրէա ուղևորած պահուն փոթորիկի անդիպելով ընկղմած է, ճամբորդները աղատուած են:

ՔԼԷՄԱՆՍՕ Կ'ԿԱԶՄԱԿԵՐՊԷ

Դահլիճին անգամներուն հրաժարումէն վերջ, Մ. Քլէմանսօ իր կուսակից- ներէն երեք հոգի նախարար տնուանուած է:

ԳԵՐՄԱՆ ԵՒ ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՀՊԱՏԱԿՆԵՐ

Պոլսոյ մէջ գտնուած դերման և տւտրիտական կառավարներուն մէկ ցու- ցակը պահանջուած է Համաձայնախօս պետութեանց ներկայացուցիչներէն, այն դիտարկուողներէն որոնք ստանձնուած են անոնց հովանաւորութիւնը:

ԳՈՐԾ ԵՐԵՔ ՄԻԼԻՈՆ ՄԵՐԴՈՑ

Անգլիաէ կ'տեղեկացնեն թէ՛ զինազարէն ի վեր արմակուած երեք միլիոն զօրքերու և ռազմամթերքի գործարաններու մէջ տշխատող մէկ ու կէս միլիոն բանուորներու գործ հայթայթուած է:

ԶՕՐԱՅՐԻՈՒՄ

Ռուսմանիոյ բանակին մէջ սկսած է զօրացրու մեծ տարիքներ ունե- ցողներէ:

ՌՈՒՄԵԼԻՈՑ ԹԱԿԱԿՈՐԻՆ ԲԱՅՄԱՆ ՃԱՌԸ

Պուրէլէն կ'տեղեկացնեն թէ՛ թագաւորը խորհրդարանի բացման առթիւ իր արտասանած ճառին մէջ կ'հաստատէ Ռուսմանիոյ իր գաշնակիցներէն չի բաժնուելու սկզբունքը: Այս ճառը ջերմ ծափահարութիւններով ողջունուած է:

ԲՈՂՈՆԻԱՅԻՔ ԸՆՈՐՀՍՊԱՐՏ

Վարչաւիայէ կ'տեղեկացնեն թէ՛ բոլոնիական բանակի մէջ ծառայող Ֆը- րանսացի սպաներու ծառայութեանց համար կառավարութեան կողմէ երախտ- տագիտութիւն յայտնող յիշատակագիր մը հրատարակած է:

ՌՈՒՍԻՈՑ ՀԱՐՑԸ

Մօտերս Ղօնտօնի մէջ պիտի գումարուի համաժողով մը ուր պիտի քըն- նուին Ռուսիոյ հետ անջատ հաշտութեանը կնքելու պայմանները:

Տօֆ Կ. Խաչերեան	ՏԻԳՐԱՆ Ա. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
ԲԺԻԿՎ. ՄԱՆԿԱԲԱՐՁ, ՎԵՐԱԲՈՑԺ	ՊԱՐԻ ՕԹՕՄԱՆԻ ԴԻՄԱՑ
Հիւանդ կը քննէ ամին օր իր բը- նտկարանը Հայոց թագ, Չալկըճի Պա- շէ՛ թիւ 109 (պոլսապահան տունը) և Բէլիտիէ ճատտէսի Պ. Չարիհ Եը- նարհաւորի դեղարանը:	ՊԱՃԱՍՈՒՏՈՒՆ ԿԱՏԵՆԵՐՈՒ
Դիւրամտացիլի պայմաններով պատրաստ է ընդունել բժշկական բա-	Հասած են և հեղեղեալ կը հասնին բուն Փրանս. կաշիներ մեծաքանակ վաճառում ՆՊԱՏԱԿՈՐ ԴԻՆԵՐ

